ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Թագուհի Չափանյան

ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության ստուգումների համակարգման, տեղեկատվական բազաների կառավարման և վերլուծության բաժնի գլխավոր վերահսկող

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Նիդերլանդների Թագավորություն (ք. Հաագա), 2024թ. հունիսի 24-ից մինչև 28-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը.

Նիդերլանդների Թագավորության ֆինանսների նախարարություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն «Public Financial Management /Պետական ֆինանսների կառավարում» թեմայով ամառային դասընթացին, Նիդերլանդների Թագավորության պետական ֆինանսների կառավարման փորձին ծանոթանալու և ՀՀ-ում դրա զարգացման նպատակով:

5. Քննարկված թեմաները

- Ֆիսկալ քաղաքականությունը Նիդերլանդների Թագավորությունում
- Բյուջետային ենթակառուցվածք
- Բյուջետային հսկողություն Բյուջեի տեսչության (Inspectorate of the Budget) կողմից
- Ծախսերի վերանայում
- Ընդհանուր ներածություն՝ Հարկաբյուջետային տեղեկատվության և հետաքննության ծառայություն (Fiscal Information and Investigation Service (FIOD))
- Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք (Political exposed persons (PEP's))

- Շահաբաժինների հեռացում (Dividend stripping)
- Խորհրդարանի դերը բյուջետային գործընթացում
- Բաց և թվային բյուջե

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացի ընթացքում Նիդերլանդների Թագավորության ֆինանսների նախարարության փորձագետների կողմից ներկայացվել են Նիդերլանդների Թագավորությունում բյուջետային գործընթացը, տարբեր մարմինների՝ ճյուղային և ֆինանսերի նախարարությունների և խորհրդարանի գործառույթները և դերը բյուջետային գործընթացի տարբեր փուլերում:

Դասընթացի ընթացքում փորձագետների կողմից ձևավորվել են աշխատանքային խմբեր, որոնք ստանալով պրակտիկ առաջադրանքներ, մասնավորապես, բյուջետային գործընթացի սիմուլյացիայի շրջանակում խմբերով կազմել ենք ճյուղային նախարարության առանձին գործառույթներին վերաբերող բյուջետային հայտեր, այնուհետև ծավալել քննարկումներ հայտում ներառված ծրագրերի առաջնահերթությունների որոշման և ֆինանսական միջոցների բաշխման մասով, որից հետո կազմել ենք ճյուղային նախարարության բյուջետային հայտ և խաղի տեսքով քննարկել ֆինանսերի նախարարության ներկայացուցիչների հետ, ինչպես նաև քննարկել ենք մեկ այլ բյուջետային հայտի (իրենց կողմից տրված օրինակ) արդյունավետության և արդյունքատվության վերաբերյալ հարցեր:

Ակտիվ մասնակցություն եմ ունեցել աշխատանքային խմբի քննարկումներին ներկայացնելով ՀՀ բյուջետային համակարգը և այս ոլորտում տեղի ունեցող բարեփոխումները:

Դասընթացի ավարտին տեղի է ունեցել հարց և պատասխան՝ դասընթացից ստացված արդյունքների վերաբերյալ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի շրջանակում հանդիպումներ չեն եղել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկություններ չեն եղել:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Թագուհի Չափանյան

02.07.2024թ.